

ԵՐԵՎԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ ն № 253.

Խմբագրությունը բաց է տառադրման 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից).
Կապարարությունը ընդունվում է ամեն լեզուով.
Կապարարությունները համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է լ է Ք օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

24 ռուսական ժամ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՐ
ԻՐԻՆ. Միտակա կազմակերպություն. Ցերկ և
թատրոն. Նամակ Թեոֆիլայից. Նամակ Ալալ-
բալայից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒՐ
ԻՐԻՆ. Պրոֆեսոր Կարիերի մահ. Նամակ Գեր-
մանիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Գիւղացու ցուերից.

ՁԷ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ

Ինչպես նկատած կը լինեն մեր ընթեր-
ցողները, վերջին երեք չորս տարիները
ստեղծատեղ կրկնվում են երկրաշարժի
ցնցումներ Անդրկովկասի և նրան կից եւ-
րոպական մասերում։ Ոչ ոք չէ մոռացել այն
երկրաշարժները, որոնք տեղի ունեցան Ա-
խալաբադի և հարեան գաւառներում, Կարսի շրջակայքում և Փոքր-Ասիայի շատ
տեղերում, որոնք ոչ միայն միասնաբեր աղ-
ււրդներ են, որոնք շինութիւններին, այլ և
զոհեր տարան թէ անային կենդա-
նիկներից և թէ նոյն իսկ մարդկանցից։
Երկրաշարժի առիթով զրաժ յօգուած-
ները մէկի մէջ մենք ցոյց էինք տուել,
որ կովկասեան երկրաշարժների մասին մեր
ունեցած վիճակագրական և գիտական
տեղեկութիւնները շատ թերի են, անկա-
տար և կցկոտուր։ Զր նայելով այն հանգա-
մանքին, որ մենք գտնուում ենք երկրաշարժի
այն զօտիներից մէկում, որտեղ յաճախ
պատահում են երկրաշարժներ, մենք մի-
շուտ այժմ ճիշտ գիտողութիւններ չունենք
արած մեր երկրաշարժների վերաբերմամբ։
Շատ հասկանալի է, որ ինքն ըստ ին-
քեան հանդէս է գալիս մեր երկրա-
շարժի երկ ուսումնասիրութեան
խնդիրը։ Իսկ կարեւոր մի խնդիր է, որ
ունի ոչ միայն գիտական, այլ և գործ-
նական նշանակութիւն մեր կենցաղավա-
րութեան մէջ։ Երկրաշարժը, բացի աչքի
ընկնող վնասներից, որ նա պատճառում է

իր աւերումներով, վնասաւոր է և այն
կողմից, որ նա մշտապէս յուզումներ մէջ է
պահում մարդկանց ջղերը և միասնակար
կերպով է ազդում մարդու հոգեկան տրա-
մադրութեան վրա, առիթ գտնելով ջը-
ղային հիւանդութիւնների զարգացմանը։
Մեր երկրում շատ քիչ կան դիտարան-
ներ, որտեղ կանոնաւոր կերպով դիտողու-
թիւններ կատարվեն երկրաշարժների վե-
րաբերութեամբ, իսկ լուրջ հետազոտու-
թիւններ բոլորովին բացակայում են։ Եթէ
Արեւիկ նշանաւոր հետազոտութիւններից
յետոյ շարունակվեն սիստեմական ուսումն-
ասիրութիւններ մեր երկրում, այժմ մենք
հարուստ գիտական նիւթ կունենայինք
մեր ձեռքին և կարող կը լինէինք մի քանի
գործնական եղանակներով թիւններ գուր-
բերել։ Բայց մինչև այժմ այդ ասպարէ-
զում շատ քիչ է արված և նախկին հարցը
իր ամբողջ լրջութեամբ դեռ սպասում է
ուսումնասիրողների։

Ամեն անգամ, երբ մեծ տարածութեան
վրա զգացվում են երկրաշարժի ցնցումներ,
ուսումնասիրութեան հարցը հանդէս է
գալիս իր կարեւորութեան ամբողջ ուժով։
Պէտք է վերջապէս կազմակերպել գիտա-
րանքների մի խիտ ցանց և ձեռնարկել
խնդիր բազմակողմանի ուսումնասիրու-
թեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՐԻՆ

ԾԽԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ռուսաց մամուլը վերջերս սկսել է զբաղվել
ծխական կազմակերպութեան հարցով, որ ար-
ժանի է լուրջ և խորին ուշադրութեան։

Ամեն մի համայնք, հասարակութիւն, ժողո-
վուրդ, եկեղեցական ծուխ, ունենալով ընդհա-
նուր քաղաքացիական պարտաւորութիւններ,
ունի և համայնական, ծխական, մասնաւոր
պարտաւորութիւններ։ Վերջինք, օրինակ, Պե-

տերբուրգ, Օդեսա կամ Թիֆլիս քաղաքները,
այդ քաղաքներում բնակվում են գանազան աղ-
գութիւնների պատկանող ժողովուրդներ—ռուս,
լեհ, հայ, վրացի, թուրք, հրէայ, գրանք ամեն-
քե պետութեան քաղաքացիներ են և, իբրեւ
քաղաքացիներ, հպատակներ, վայելում են որոշ
իրաւունքներ և կրում են որոշ պարտաւորու-
թիւններ։ Գրանք ամենքը պարտաւոր են մաս-
նակցել ընդհանուր պետական հանրօգուտ գոր-
ծերին, նպաստել այն բոլոր հիմնարկութիւն-
ներին, որոնց նպատակն է այս և այն նիւթա-
կան կամ բարոյական արժանեցութիւնը ցոյց տալ
ընդհանուր ազգաբնակչութեան, առանց ցեղի,
կրօնի և լեզուի խտրութեան։ Սակայն առան-
ձին համայնքները, ծուխերը, որպէս զի չը ծան-
րանան ընդհանուր վրա, պէտք է հնարաւոր
եղածին չափ օգնեն համայնքին, ծուխի կարօ-
տեաններին, մտածեն ծխական կարիքների մա-
սին։ Կամ վեր առնենք որ և է քաղաքի գա-
նազան մասերը, թաղերը, այդ թաղերը, իբրեւ
քաղաքի բաղկացուցիչ մասեր, պարտաւոր են
որոշ պարտաւորութիւններ յանձն առնել և ո-
րոշ նիւթական ու բարոյական արժանեցութիւն
ցոյց տալ քաղաքին, բայց ամեն մի քաղաքա-
մաս ունի, անշուշտ, իր սեփական կարիքները,
պահանջները, որոնց պէտք է գոհացումն տան
սեփական, թաղական միջոցներով։

Այդ հանգամանքից ինքն ըստ ինքեան ծա-
գում է այսպիսի մի հարց. որն է ամենանպա-
տակալը, գործնական և օգտակար միութ-
լիւնը համայնական կազմակերպութեան հա-
մար։ Եւրօպայի շատ տեղերում ընդունված է
թաղական կազմակերպութիւնը, այսինքն մի
այնպիսի կազմակերպութիւն, երբ թաղի բո-
լոր բնակիչները, մի առանձին համայնք կազմե-
լով, տնօրինում են իրանք մասնաւոր, թաղա-
կան գործերը, հոգս են տանում իրանց թաղի
նիւթական, մտաւոր և բարոյական զարգաց-
ման մասին։ Սակայն, ռուսաց մամուլի կար-
ծիքով, թաղական կազմակերպութիւնը յարմար
չէ Ռուսաստանին. յարմար ծխական-եկեղե-
ցական կազմակերպութիւնն է, այսինքն մի կազ-
մակերպութիւն, որ քրիստոնեայ շատ ազգերի,

ուրեմն և ուսման, հայերի մէջ, վաղուց գո-
յութիւն ունի և հէնց այդ պատճառով էլ
ռուսաց օրէնսդրութեան մէջ նա իր որոշ տեղն
ունի գրաւած։

Սակայն մայրաքաղաքի մամուլի մի մասը
առաջարկում է զէմսովային—ծխական կազմա-
կերպութիւն, բայց այդ կազմակերպութիւնը
առարկութեան է հանդիպում այն նկատումնե-
րով, թէ զէմսովային ազգաբնակչութիւնը բաղ-
կացած է լինում սովորաբար գանազան կրօն-
ների և գաւառութեան պատկանող մարդկան-
ցից. առարկողները, իբրեւ միակ յարմար և
գործնական միջոց, առաջարկում են եկեղե-
ցական-ծխական կազմակերպութիւնը։

Եկեղեցական-ծխական կազմակերպութիւնը,
նախատեսված և ուսաց օրէնքներով, ինչ-
պէս ասացինք, վաղուց գոյութիւն ունի մեր
մէջ, բայց թէ մեր, թէ ուսման մէջ
այդ կազմակերպութիւնը չէ գործադրվում նոյն
իսկ օրէնքի դժած սահմաններում։ Յատկապէս
հայերի համար ծխական կազմակերպութիւնը
նախատեսված է 1836 թվ. Պօլօժնիայով։
Միւսում է հոգեւոր իշխանութեան և ծխական
ժողովրդին վերականգնել խելացի հիմունքների
վրա ծխական կազմակերպութիւնը և մենք
համոզված ենք, որ որոշ, խելացի հիմունքների
վրա գրված ծխական կազմակերպութիւնը,
յարմարեցված, ի հարկէ, երկրի ընդհանուր օ-
րէնքներին, անկասկած, մեծ օգտակարիչ ոյժ
կարող է հանդիսանալ և միջոց տալ քաղաքա-
յին վարչութիւններին՝ աւելի ընդհանուր գոր-
ծերով և հոգսերով զբաղվել։

Ցանկալի էր լսել այս մասին ձեռնհաս իրա-
ւադէսների կարծիքը՝ խնդիրն աւելի լաւ պար-
զաբանելու համար։

Հ. Ա.

ՅԻՐԿԵՒԹԱՏՐՈՆ
(Նամակ Բագուից)

Յունվարի 21-ին երեկոյան այստեղ երկու
բէնէֆիս կար—մէկը ցերեկում, միւսը թատրո-
նում։ Ցերեկում անեղ գցելու տեղ չը կար, տոմ-
նիկները ու վեց հատ ուսանողներից, ունի և մի
բուրդ հասկացող, որոշ չափով կրթված գիւ-
ղական ինտելիգենցիա, որին սակայն պակա-
սում է մի բան, միայն մի բան՝ եռանդ, գոր-
ծելու սէր... Թե՛ղ լաւ հասկանայ Գանձայի ին-
տելիգենցիան, որ իր վրա մեծ պարտք կայ, և
եթէ այսօր արդէն հասունացած համայնական
խանութի լուրջ խնդիր խելովի ու մոռացու-
թեան տրվի, (որի համար շատերն են տքնում,
կաշուից դուրս դալիս) նա և միայն նա կը մնայ
պատասխանատու հասարակական դատի առաջ։
Սակայն ընկերակցին մի խորհուրդ միայն
այդ ինտելիգենցիային և առհասարակ ամեն
մի գիւղական գործչի։ Գիւղացուն շատ դժուար
է դուրս կորզել իր դարեւոր տգիտութիւնից
ու խորտակելով նրա ստրկական լաւար գա-
ղափարները՝ ներմուծել նորը, լուսաւորը, օգ-
տակարը։ Նա այնքան խաբկել է իր կոյր ա-
ռաջնորդներից (որ միշտ եղել են նրա հարս-
տահարիները), որ այսօր գործնական, իրական
փաստերը միայն կարող են վերականգնել նրա
մեռած հաւատը։ Մի անյայտ, թէկուզ անգի-
տակցաբար, անփորձութիւնից կամ անհոգու-
թիւնից առաջ եկած բացասական փորձ, և
գիւղային խրատած՝ էլ մօտ չի գայ ձեզ ու
ձեր առաջարկած գործին, որքան էլ գլուխ
տրաքացնէք նրա օգտաւէտութեան մասին։ Ուս-
տի գիւղական գործչի առաջին ու գլխաւոր
ջանքը պիտի լինի իր բոլոր ձեռնարկութիւն-
ների մէջ՝ «գ գ ու շ ու թ իւն» ու մեծ զգու-
շութիւն։ Թե՛ղ դանդաղ, կամայականաց առաջ
գնայ գործը, միայն թէ առանց գնայ և ոչ թէ
միանգամից տալիս ու վրա լինի։ «Տաւը չա-
փի իր, մէկը կտրիր» դա ամենից շատ գիւ-
ղական գործչի համար է առած, որի և առա-
ջին նշանաբանը պիտի լինի...

Սպասում ենք, գանձայից...

Ջաւախկի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱՑՈՒ ՑԱԽԻՐԻՑ

Հասկացել, ըմբռնել է արդեօք գիւղացին ի-
րան կողմագող այդ աւազակային որջերի՞ գիւ-
ղական խանութների աւերիչ ազդեցութիւնը։
Մտածում է մեր գիւղացին ազատել իր շինքն
այդ խնդրող օղակից։
Ոչ։
Ամբողջ երեկոյ է. նա տհաս մանկան պէս
հեռուն չէ նայում և ողբան էլ քաղցած լինի,
զրպից կարմիր երեւացող մի փառած խնձոր չի
փոխի մի գաթիկի հետ։ Մի քովէ նա գտնւում
էր մարմնի վրա այն կակիծը, որ պատճառում
են խանութներին երկաթի ճիւղանները, բայց
և իսկոյն մոռանում է ու առժամանակեայ
հանգիստը վերադառնալով, սկսում է իրան ա-
րիւնդուայ անող այդ զարկելի ճիւղանները լիզել։
Միթէ մեր գիւղացին չէր կարող «հասարա-
կական խանութներին» միջոցով համ խանու-
թաւորի հարստահարութիւններից ազատվել,
համ էլ իր վիճակը բարւոյեւր Միթէ մեր գիւ-
ղացին յիշաւի այնքան զուրկ է միջոցից, որ
չէ կարող այդպիսի մի հանրօգուտ գործի հա-
մար յատկացնել մի որոշ գրամագուլիս, դրա-
մագուլիս, որ իրան բացի նիւթական ու բա-
րոյական ստրկութիւնից ազատելուց, ապագա-
յին գրամական օգուտ էլ պիտի բերէ։ Բայց
նչ մեր գիւղացին առանց զօռի, առանց կո-
պիտ ուժի, ոչ մի կօպէկ չի տայ, որքան էլ
չափաւէտ, լաւ գործի համար լինի այդ։
Գանձա գիւղը, որ մօտ 150 տուն է, տա-
րեկան 4000 ռուբլուց անել հողային հարկ ու
հասարակական ծախքեր է տալիս։ Միթէ այդ
չորս հազարի փոխանակ մի տարի, միայն մի

տարի չէ կարող 6 կամ 7 հազար տալ,
որից 2 կամ մի հազարով հիմք դրվէր մի բարի
գործի՝ հասարակական խանութի։ Բայց ոչ. չէ
որ հարկը պահանջող տանուտէր կայ, որ մշտ-
րակը ձեռքի չըլնում է դռնէ դուռ։ Իսկ հասա-
րակական խանութի համար ո՞վ է շրջողը, ո՞վ է
խօսողը, ո՞վ հոգն է։ Միւսը չէ. բաւական էր
Գանձայի արօտներում փռված հօտերի 100-ից
2 ոչխար միայն յատկացնել այդ բարի գործի
համար և ահա կը կազմվէր 400-ից աւելի մի
հօտ (1800—2000 ռուբլի գործողութեամբ),
որ կարող էր կազմել գիւղական մի հարուստ
խանութի սկզբնական գրամագուլիս։ Ամենա-
աղքատ գիւղացու վրա մի որդուն ամուսնաց-
նելը, (նշան, «փայ», հարսանիք) նստում է 400
—500 ռուբլի։ Նշանից մինչև պսակը արաղը
գետի պէս հոտում է երկու նոր «բարեկամ»։
Դարձած գիւղացիների տներում և երկուսի
համար էլ (մասնաւոր տղայի) պարտքի անյա-
տակ դռները բաց անում։ Ի՞նչ կը լինէր մեր
գիւղացին խոհեմ կերպով կրճատելով այդ ա-
ւելորդ ու միանգամայն միասնակար շտապու-
թիւնների իր արեւն քրտինքի վնասով իր փո-
խանակ իր կորուստ համար գործածելու, և
լուծայ էլ փոխարինաբար տար (չենք ասում
նուիրէր, բաշխէր), բարի գործի համար։ Վե-
րապէս ինչու թողնել եկեղեցական ահագին
գրամագուլիսներն անտէր կորչելու։ Միթէ այդ
փողը հասարակութեանը չէ ու չէ կարելի
յատկացնել կամ դէթ փոխարինաբար գործա-
դրել նոյն հասարակութեան նիւթական ու
բարոյական մեծ կարիքներին։ Գանձայի եկե-
ղեցին, օրինակ, մօտ չորս հազար ռուբլի փող
ունի (անուանւմ միայն), ոչ հանդիստ պաւկած
վայելում են պ. երէցփոխի ազգականներն ու
ու մեր գիւղացին բարի գործ կատարելու հա-
մար միջոցներից զուրկ չէ։
Գաւառի գիւղերից Գանձան միայն պատրաստ

